Շրջաբերական Կոնդակ

ԳԷՈՐԳ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

Գերաշնորհ Առաջնորդաց և եպիսկոպոսաց, բարձրապատիւ փոխանորդաց և վանահարց, հարազատ որդւոց Մայր Աթոռոյս ողջոյն և օրհնութիւն Հայրապետական։

Ի ժամանակս նախնեաց մերոց հաւատոյ որդիք Սրբոյ Հօրն Մերոյ Գրիգորի Լուսաւորչի զիմէին յեկեղեցի Աստուծոյ ի լուր հոգեզուարճ երգոց աստուածային պաշտամանց, որք կատարէին երկիւղածութեամբ, հոգւով և մտօք. և հոգեշունչ քարոզիչք հնչեցուցանէին յունկն նոցա զբանն աւետարանի, ուսուցանէին զվարդապետութիւնն եկեղեցւոյ և պատմէին զվարս և զմեծազործութիւնս երանելի առաքինեաց, որք եղեալ էին զանձինս իւրեանց վասն ազգի, հայրենեաց և եկեղեցւոյ։ Յայնոսիկ ժամանակս թէև բռնութիւն հակառակորդաց քրիստոսական կրօնիս մերոյ ի հալածանս և ի նեղութեան ունէր զեկեղեցի և զհաւատացեալս ի Քրիստոս, սակայն եկեղեցի պայծառանայր և հաւատացեալք սերտիւ կապեալ ի սէր հայրէնի կրօնից և զօրացեալ օրինակօք առաքինաց, աներկիւղ համարձակութեամբ դիմագրաւ լինէին բռնութեանց, հրապուրանաց և փորձութեանց աշխարհիս և անսասան մնային ի հաւատս իւրեանց, անուն բարի ժառանգելով։

Անցին բռնութիւնք և հալածանք. ընդ կարծեցեալն խաղաղութեան սկսաւ մեղկութիւն յոմանս ի պաշտօնէից եկեղեցւոյ և ի ժողովրդեան և անտարբերութիւն դատապարտելի։ Եւ այսօր, ցաւ ի սիրտ, տեսանեմք ի տեղիս տեղիս զբազումս ուծացեալ յեկեղեցւոյ, զառածեալ յիրս աշխարհի և անձնատուր լեալ զայթակղութեանց և կրից, անձնական վայելչութեանց և շահուց։

Մոռացեալ իսպառ զազգային և զբարոյական պարտիսն իւրեանց, օտարանան յազգէ և յեկեղեցւոյ, զանձինս իւրեանց միայն պաշտելով։ Իսկ ոմանք ի գիւղականաց մերոց վասն խարուսիկ յուսոյ երկրաւոր շահու կամ վասն անձնական վրիժուց, կամելով զիրաւունս այլոց, մինչ իսկ զրացեաց և ազգականաց, անարդարութեամբ ոտնահարել, վաճառեն զհաւատս իւրեանց կամ զրպարտեն զանմեղս անիրաւաբար և զրազում ընտանիս դժբախտացուցանեն։ Աղէտաբեր է յոյժ, զի թիւ այդպիսաց օրըստօրէ բազմանայ։

Զայս վիճակ ժողովրդեան մերոյ տեսանելով զողբ սրբոյ հօրն մերոյ Մովսիսի Խորենացւոյ հառաչեմք, և այսու ընդոստուցիչ ձայնիւ դիմեմք առ հոգևոր պաշտօնեայսդ եկեղեցւոյ և առ ժողովուրդն, դոչելով, զդաստացարուք և յուշ ածէք զբարոյական պարտիս Ձեր, ժողովուրդ հայոց։

Առաջնորդք և եպիսկոպոսունք, փոխանորդք և վանահարք, որք կարգեալ էք առաջնորդել ժողովրդեան, պատրաստ լերուք յամենայն ժամ և պատրաստեցէք զհոգևոր պաշտօնեայս, որք ընդ ձերով իշխանութեամբ են, զդաստութեամբ մարանչիլ ընդդէմ ամենայն մոլութեանց, դայթակղութեանց և բարոյական ախտից, յորս տուայտի ժողովուրդ մեր։

Տուք օրինակ բարեաց բանիւ և գործով։ Զհետ լերուք բարեկարգութեան եկեղեցեաց. ի պայծառութեան պահելով զնոսին՝ կարգաւորեալ ժամերգութեամբ, կանոնաւոր երգեցողութեամբ և կենդանի քարոզութեամբ։

Որպէս դպրոցք հաստատեալ են ի կրթել և ի դաստիարակել զմանկտին, եկեղեցի զնոյն ունի զկոչումն վասն ժողովրդեան։ Ուստի յայսոսիկ աւուրս ապաշխարութեան և յետ այսորիկ միշտ և հանապազ տուք պատուէր ամենայն աւագ երիցանց և քահանայից՝ բարոզել ժողովրդեան յամենայն եկեղեցիս ընտանի բարբառով զբանն Սուրբ Աւետարանի, զբարոյական պատուէրս Աստուածային, վառել զեռանդն առ բարին, զսէր առ Մայրենի եկեղեցին, առ ազգն Հայոց և առ ամենայն աստուածահաճոյ հաստատութիւնս և յիշեցուցանել հանապազ զքրիստոնէական վեհ պարտականութիւնս իւրեանց առ միմեանս։ Իսկ քահանայք, որք անկարողք են քարոզել և զաւուրն խորհուրդ բացատրել այլով եղանակաւ, գէթ յաւուրս կիւրակէից, տէրունական և նշանաւոր տօնից, յետ ընթերցման Աւետարանի ի տեղի քարոզից, թարգմանեսցեն զայն զիւրըմբռնելի բարբառով ժողովրդեան։ Ցորդոր կարգացէք ամենայն հոգևորականաց՝ Ջան ի գործ դնել սիրելի կացուցանել ժողովրդեան հայոց զեկեղեցի, զազգային սրբութիւնս և զհայրենի սրբազան աւանդս և հանապազ աստուածային պատուիրանաւ և քրիստոնէական ոգւով կրթել զմիտս

ժողովրդեան մերոյ առ ի հեռի կացուցանել ի մոլութեանց, յանբարոյ և ի վնասակար գործոց, որք չարագոյնք են քան զամենայն բռնութիւնս և թունաւորեն զազգային, զընկերական և զընտանեկան կեանս բազմաց։

Աղօթեմք առ Աստուած հաստատել զժողովուրդն մեր ի բարի հաւատս, յառաքինի վարս և ի քրիստոնէական մարդասէր գործս և զՁեզ՝ զամենեսեան և զուխտ եկեղեցւոյ զօրացուցանել ի գործս շինութեան և պայծառութեան Հայաստանեայց եկեղեցւոյ, սրբութեան և երջանկութեան ժողովրդեան մերոյ։

Ողջ լերուք, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն։

ԳԷՈՐԳ Ե.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

Ի 20 փետրուարի 1914 ամի
ըստ Տոմարիս Ռիցկդ
ի Հայրապետութեան մերում Գ. ամի
յԱրարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի.
ի Վաղարշապատ
Թ. 260—267